

1.4. Աշխատանքի շուկայի ցուցանիշներ

1.4.1. Ձբաղվածություն

Տնտեսապես ակտիվ բնակչության միջին թվաքանակը հանրապետությունում 2005թ. հունվար-ապրիլին, ըստ գնահատման, կազմել է 1203.8 հազ. մարդ, որի 91.2%-ը կան 1097.6 հազ. մարդ զբաղված են եղել տնտեսության մեջ, իսկ 8.8%-ը կան 106.2 հազ. մարդ (միջինը ժամանակաշրջանի համար) չեն ունեցել աշխատանք, գրանցվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ՀՀ զբաղվածության պետական ծառայություն» գործակալությունում և ստացել գործազուրկի կարգավիճակ:

2005թ. ապրիլի վերջի դրությամբ վերոհիշյալ գործակալությունում հաշվառման կանգնած 135.8 հազ. աշխատանք փնտրողներից 96.4%-ը կան 130.9 հազ. մարդ եղել են չզբաղվածներ: Գործազուրկի կարգավիճակ ստացել են չզբաղվածների 78.8%-ը կան 103.2 հազ. մարդ: Տարեսկզբից աշխատանքի են տեղավորվել 2.3 հազ. մարդ, նրանցից՝ կանայք՝ 56.5%:

2005թ. ապրիլ ամսին վերոնշյալ գործակալությունում գրանցված 2.0 հազ. չզբաղվածներից 1.6 հազարը կան 80.0%-ը ստացել են գործազուրկի կարգավիճակ: Նույն ժամանակամիջոցում հաշվառումից դուրս են եկել 5.2 հազ. չզբաղված աշխատանք փնտրողներ, նրանցից 0.7 հազարը կան 13.5%-ը՝ աշխատանքի տեղավորման կապակցությամբ:

Աշխատուժի առաջարկն ըստ հանրապետության մարզերի 2005թ. ապրիլին¹


(ամսվա վերջի դրությամբ)

	Աշխատանք փնտրողների թվաքանակը		Նրանցից՝ չզբաղվածներ		Նրանցից՝ գործազուրկներ	
	ընդամենը, հազ. մարդ	2004թ. ապրիլի նկատմամբ, %	ընդամենը, հազ. մարդ	2004թ. ապրիլի նկատմամբ, %	ընդամենը, հազ. մարդ	2004թ. ապրիլի նկատմամբ, %
ք. Երևան	29.1	87.1	28.8	87.0	25.2	86.3
Արագածոտն	2.5	108.7	2.0	95.2	1.4	100.0
Արարատ	4.9	89.1	4.5	84.9	3.4	85.0
Արմավիր	6.3	75.0	6.1	72.6	3.9	72.2
Գեղարքունիք	8.0	92.0	7.4	87.1	4.9	84.5
Լոռի	26.5	96.0	26.1	95.3	20.7	94.1
Կոտայք	7.4	94.9	6.8	87.2	5.1	91.1
Շիրակ	29.8	96.4	28.9	93.8	22.5	89.6
Սյունիք	13.7	82.5	13.4	81.2	11.2	83.0
Վայոց ձոր	2.2	95.7	2.1	91.3	1.5	88.2
Տավուշ	5.4	98.2	4.8	92.3	3.4	94.4
Ընդամենը ՀՀ	135.8	91.1	130.9	88.8	103.2	88.0

Պաշտոնապես գրանցված գործազուրկներից 72.7 հազ. մարդ կան 53.5%-ը կազմել են կանայք: Նրանց տեսակարար կշիռը գործազուրկների ընդհանուր թվաքանակում 2004թ. ապրիլի նկատմամբ նվազել է 15.8%-ով: Աշխատուժի պաշտոնապես հայտարարված պահանջարկը 2005թ. ապրիլի վերջին կազմել է 1118 մարդ, այդ թվում՝ 66.2%-ը կան 740-ը՝ բանվորական մասնագիտությունների նկատմամբ:

¹ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ՀՀ զբաղվածության պետական ծառայություն» գործակալության տվյալներով:

**Ըստ մասնագիտությունների աշխատուժի նկատմամբ գործատուների պահանջարկը
և թափուր աշխատատեղերի ծանրաբեռնվածությունը**



**Աշխատուժի նկատմամբ գործատուների պահանջարկն
ըստ մասնագիտությունների 2005թ. ապրիլին¹**

Մասնագիտությունների անվանումը	Ընդամենը	որից՝ անսվա վերջի դրությամբ
Ազատ աշխատատեղեր	1392	1118
Ծառայողներ, ընդամենը	428	378
<i>Նրանցից՝</i>		
տնտեսագետ	1	-
ինժեներ	14	9
բժիշկ	207	201
մանկավարժ	55	53
իրավաբան	3	2
գյուղատնտես	1	1
այլ մասնագետներ	147	112
Բանվորներ, ընդամենը	964	740
<i>Նրանցից՝</i>		
խառատ	25	20
փականագործ	29	20
մեխանիկ	7	7
էլեկտրիկ	9	6
ատաղձագործ	5	5
վարորդ	53	46
եռակցող	20	19
կոշկագործ	-	-
կարող, մանող, գործող, ջուլիակ	200	174
բանվորական այլ մասնագիտություններ	266	153
մասնագիտություն չպահանջող աշխատատեղեր	350	290

¹ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ՀՀ զբաղվածության պետական ծառայություն» գործակալության տվյալներով:

Թափուր աշխատատեղերի ծանրաբեռնվածության դինամիկան ըստ ամիսների¹, 2005թ.

(ամսվա վերջի դրությամբ)

	Աշխատուժի նկատմամբ գործատուների պաշտոնապես ներկայացրած պահանջարկը, մարդ	Զգբաղվածների թվաքանակը մեկ թափուր աշխատատեղի հաշվով մարդ	%	
			նախորդ ամսվա նկատմամբ	նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ
Հունվար	956	142	63.7	67.0
Փետրվար	1058	127	89.4	53.4
Մարտ	1011	133	104.7	59.4
Ապրիլ	1118	117	88.0	55.7

Գործազրկության նպաստի միջին չափն ըստ ամիսների, 2004-2005թթ.¹


(ամսվա վերջի դրությամբ)

	Նպաստառու գործազուրկների թվաքանակը, հազ. մարդ		Գործազրկության նպաստի միջին չափը, դրամ	
	2004թ.	2005թ.	2004թ.	2005թ.
Հունվար	5.4	3.5	3503	6363
Փետրվար	5.9	4.1	3154	6438
Մարտ	6.2	4.9	3267	6696
Ապրիլ	6.2	5.7	3236	6349

Պաշտոնական գործազրկության մակարդակն ըստ ամիսների¹

(ամսվա միջինը, գնահատական, %)

	2004թ.	2005թ.
Հունվար	9.8	9.0
Փետրվար	9.8	8.9
Մարտ	9.8	8.9
Ապրիլ	9.5	8.5



¹ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալության տվյալներով: